ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ միջև

2014թ. սեպտեմբերի 23-ը, ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆ. Կոտայքի մարզի կոշտ թափոնների կառավարման ծրագիր

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Բանակցությունները տեղի էին ունեցել Երևանում, 2014թ. սեպտեմբերի 23-ին և վերաբերում էին Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի («ՎԶԵԲ» կամ «Բանկ») կողմից Հայաստանի Հանրապետությանը («Վարկառու») առաջարկվող՝ 3,5 միլիոն եվրո գումարի չափով վարկին («Վարկ»): Վարկի միջոցները կօգտագործվեն Կոտայքի մարզում և Սևանի համայնքում կոշտ թափոնների կառավարման բարելավման նպատակով, ինչը նկարագրված է Վարկային Համաձայնագրի Հավելված 1-ում («Ծրագիր»):

1.2 Վարկի պայմանները կփաստագրվեն համաձայնագրում, որը կկնքվի Հայաստանի Հանրապետության և Բանկի միջև («Վարկային Համաձայնագիր»): Բացի այդ, կլինի նաև համաձայնագիր Հայաստանի Հանրապետության, Հրազդանի քաղաքապետարանի և Բանկի միջև («Դրամաշնորհային համաձայնագիր»), ինչպես նաև համաձայնագիր Աբովյանի, Բյուրեղավանի, Չարենցավանի, Հրազդանի, Նոր Հաճնի, Սևանի, Ծաղկաձորի և Եղվարդի քաղաքապետարանների («Ծրագրի Քաղաքապետարաններ») և Բանկի միջև («Ծրագրի Իրականացման և Աջակցության Համաձայնագիր»): Հայաստանյան պատվիրակության և Բանկի պատվիրակության անդամների ցանկը ներկայացված է Հավելում 1-ում:

1.3 Բանակցությունների ընթացքում ՀՀ պատվիրակության և Բանկի պատվիրակության անդամները սկզբունքորեն համաձայնեցին Վարկային Համաձայնագրի, Դրամաշնորհային Համաձայնագրի և Ծրագրի Իրականացման և Աջակցության Համաձայնագրի տեքստերի նախագծերի վերաբերյալ, որոնք ներկայացված են սույն Արձանագրությանը կից (սակայն ենթակա են հետագա վերանայման և հաստատման): ՀՀ պատվիրակությանը նաև տեղեկացրեցին, որ Բանկի Ստանդարտ Պայմաններն ու Դրույթները («ՍՊԴ») վարկային փաստաթղթերի անբաժանելի մաս են հանդիսանում: Ստանդարտ Պայմանների և Դրույթների կրկնօրինակը տրամադրվեց ՀՀ պատվիրակությանը:

1.4 ՀՀ պատվիրակության համար նաև պարզաբանվեց այն, որ Վարկային Համաձայնագրի, Դրամաշնորհային Համաձայնագրի և Ծրագրի Իրականացման և Աջակցության Համաձայնագրի տեքստերը ենթակա են Բանկի տարբեր ստորաբաժանումների կողմից հետագա վերանայման և որ Ծրագիրը նույնպես ենթակա է Բանկի Տնօրենների Խորհրդի կողմից վերջնական հաստատման:

1.5 Վարկային Համաձայնագրի, Դրամաշնորհային Համաձայնագրի և Ծրագրի Իրականացման և Աջակցության Համաձայնագրի նախագծերում սահմանված տերմինները, սույն Արձանագրության մեջ օգտագործվելիս, պետք է ունենան նույն իմաստները: Քննարկվեցին ստորև արձանագրված թեմաները:

2. ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Քննարկվեցին հետևյալ հարցերը.

<u>Ընդհանուր հարցեր</u>

- ՀՀ պատվիրակությունը մտահոգություն բարձրաձայնեց, որ 450 դրամ կազմող՝ աղբահավաքման վճարը, որը հաշվարկվել էր տեխնիկատնտեսական ուսումնասիրության խորհրդատուների կողմից ծրագրի նախապատրաստման փուլում, կարող է չափազանց բարձր լինել բնակչության համար, և ծրագիրը կարող է ֆինանսական բեռ դառնալ պետական բյուջեի համար, եթե պետությունը ստիպված լինի սուբսիդավորել գործառնությունները: Բանկի պատվիրակությունը բացատրեց, որ իրավական համաձայնագրերը ի նկատի ունեն *կոշտ թափոնների ծառայությունների ծախսերի լիարժեք վերականգնմանն ուղղված սակագները*, իսկ ճշգրիտ գումարները կհաշվարկվեն հաճախորդի և ծրագրի սուբյեկտի կողմից, խորհրդատուների աջակցությամբ, ծրագրի իրականացման փուլի ընթացքում:

<u>Վարկային Համաձայնագիրը</u>

- Նախաբանը, երրորդ պարբերությունը, Ծրագրի Քաղաքապետարանների անունները. ՀՀ պատվիրակությունը նշեց, որ համաձայն ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորված՝ կոշտ թափոնների ոլորտի ռազմավարությանը, Գեղարքունիքի մարզը պետք է ներառվի Կոտայքի ծրագրի շրջանակներում կառուցվելիք ռեգիոնալ աղբավայրին: ՀՀ պատվիրակությունը առաջարկեց հանել համայնքների անունները Վարկային համաձայնագրի նախաբանից՝ ապագայում ճկունության հնարավորություն թողնելու նպատակով: Սևանի քաղաքապետարանի ներկայացուցիչը հայտնեց իրենց միանշանակ դիրքորոշումը. իրենք չեն ստորագրի ներկայիս համաձայնագիրը, եթե Գեղարքունիքի մարզի ապագան այս առումով պարզ չլինի:
  Բանկի պատվիրակությունը բացատրեց, որ ծրագրի աշխարհագրական շրջանակը համաձայնեցվել էր Պայմանների և ժամկետների նկարագիր-ամփոփագրում (Term Sheet): Ներկայիս ծրագրից հնարավոր չէ հանել Սևանի քաղաքապետարանը և ավելացնել Գեղարքունիքի մարզը այս փուլում: Գեղարքունիքի մարզը ներառելու նպատակով ծրագրի շրջանակների փոփոխումը կպահանջի ծրագրի համար լրացուցիչ նախապատրաստում, իսկ դա հնարավոր չէ ընդգրկել ներկայիս իրավական բանակցությունների գործընթացում: Բանկը առաջարկեց սկսել ծրագրի նախապատրաստումը՝ սույն ծրագրի Փուլ II-ի շրջանակներում Գեղարքունիքի մարզը ներառելու նպատակով: Բանկի պատվիրակությունը պարզաբանեց, որ Փուլ II-ի նախապատրաստումը կլինի արագ, և ներկա ծրագիրն ու առաջարկվող Փուլ II-ը կիրականացվեն մասամբ զուգահեռ: Որոշում ընդունվեց անմիջապես սկսել Փուլ II-ի նախապատրաստումը (ենթակա է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաստատման), որպեսզի երկու ծրագրերը (Փուլ I և Փուլ II) ավարտվեն միևնույն ժամանակ, եթե դա ընդհանրապես հնարավոր է:

Բանկի պատվիրակությունը նշեց, որ Փուլ II-ի նախապատրաստումն ու իրականացումը չի կարող տեղավորվել ներկայիս ֆինանսավորման շրջանակներում, ուստի անհրաժեշտ կլինի մոբիլիզացնել լրացուցիչ վարկային և դրամաշնորհային միջոցներ:
ՀՀ պատվիրակությունն առաջարկեց սույն ծրագրի իրականացման արդյունքում առաջացած խնայողություններն օգտագործել Գեղարքունիքի մարզում ներդրումները ֆինանսավորելու համար: Բանկի պատվիրակությունը պարզաբանեց, որ ներկայիս ծրագիրը մշակվել էր 2011 թվականին, և, հաշվի առնելով ժամանակի ձգձգումը (ինֆլյացիան, գների փոփոխությունը և այլն), պետք չէ խնայողություններ ակնկալել: Այնուամենայնիվ, եթե Կոտայքի ծրագրի իրականացման արդյունքում լինեն ֆինանսական խնայողություններ, նման խնայողությունները կարող են օգտագործվել Փուլ II-ի նոր ներդրումների համար՝ Գեղարքունիքի մարզը ներառելու նպատակով (սակայն սա ենթակա է որոշակի պայմանների և անհրաժեշտ հաստատումների): Գեղարքունիքի մարզում ներդրումների կոնկրետ գումարը կսահմանվի լրացուցիչ տեխնիկական ուսումնասիրության և ծրագրի նախապատրաստման ընթացքում:
Բաժին 1.02. ՀՀ պատվիրակությունը մտահոգված էր, որ վարկի գումարը, որը ենթավարկի տեսքով տրամադրվելու է Ծրագրի Քաղաքապետարաններին Կոտայքի մարզի կոշտ թափոնների ծրագրի ներքո, կգերազանցի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շեմը, ըստ որի քաղաքապետարանները չեն կարող վերցնել վարկեր, որոնց գումարը գերազանցում է մունիցիպալ բյուջեի 20 տոկոսը: Բանկի պատվիրակությունը պարզաբանեց, որ սուվերեն վարկը տրամադրվում է Հայաստանի Հանրապետությանը, հետևաբար, Ֆինանսների նախարարությունը և Ծրագրի Քաղաքապետարանները պետք է գնահատեն Օժանդակ Վարկային Համաձայնագրի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:

- Բաժին 2.02 (ե) (1). Կողմերը համաձայնեցին թողնել փակագծերը Վարկի առաջին Մարման Ամսաթվի և Վարկի վերջին Մարման Ամսաթվի համար և լրացնել դրանք Վարկային Համաձայնագրի ստորագրման օրինակում ստորագրումից առաջ:
- Բաժին 2.02 (զ). Միջոցների Հասանելիության Վերջին Ամսաթիվը պետք է թողնել փակագծերում և լրացնել Վարկային Համաձայնագրի ստորագրման օրինակում ստորագրումից առաջ:
- Բաժին 2.03. ՀՀ պատվիրակությունը նախընտրեց, որպեսզի Մեկնարկային Վճարը վճարվի ոչ թե Հասանելի Գումարից, այլ որպեսզի դրա փոխարեն Վարկառուն վճարի Մեկնարկային Վճարը իր սեփական միջոցներից: Հավելված 2-ին կից հավելումը պետք է համապատասխանաբար փոփոխվի:
- Բաժին 3.01. ՀՀ պատվիրակության խնդրանքով ընդգծվեց այն փաստը, որ Վարկառուն Հայաստանի Հանրապետությունն է, իսկ Ֆինանսների նախարարը հանդիսանում է Վարկառուի Լիազոր Ներկայացուցիչ, և Բաժին 3.01-ի Ծրագրի հաստատական հոդվածները վերաբերում են Վարկառուին:
- Բաժին 3.01 (է). Կողմերը որոշեցին հանել հետևյալ տեքստը *«կամ, հանգամանքներից ելնելով, եթե ցանկացած այսպիսի անձ (բացի ֆիզիկական անձանցից) կամ սուբյեկտ դա չի անում, անհապաղ վճարի այդ վարձավճարները»:*
- Բաժին 5.01 (բ). Որոշում կայացվեց փոխարինել «Վարկառու»-ն «Հրազդանի Քաղաքապետարան»-ով սույն ենթաբաժնի նպատակների համար և փոփոխել ձևակերպումը հետևյալ կերպ. *«Դրամաշնորհային Համաձայնագիրը ձևակերպվել և հանձնվել է, և դրա ուժի մեջ մտնելու կամ Հրազդանի Քաղաքապետարանի՝ (Վարկառուի համաձայնությամբ) օգտագործումներ կատարելու իրավունքի բոլոր նախապայմանները, բացառությամբ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց, բավարարվել են»:*

- Բաժին 5.01(գ) [*նախկին համարակալումը*]. Ուժի մեջ մտնելուն նախորդող պայմաններից որոշվեց հանել կիրառելի թույլտվությունների տրամադրումը:
- Բաժին 5.01 (գ) [*ներկայիս համարակալումը*]. որոշվեց փոխարինել «բաժնետերեր» բառը «հիմնադիրներ» բառով:
- Բաժին 5.01 (գ) և Բաժին 5.01 (դ). ՀՀ պատվիրակությունը հարցրեց Ծրագրի ընկերության և ծրագրի իրականացման թիմի կազմի և պարտավորությունների մասին, և Բանկի պատվիրակությունը համապատասխան պարզաբանումներ տրամադրեց:
- Բաժին 5.01 (է) [*նախկին համարակալումը*]. որոշում կայացվեց հանել հետևյալ պահանջը Ուժի մեջ մտնելուն նախորդող պայմաններից «*կիրառվող օրենքը թույլ է տալիս մաքրման ծառայությունների դիմաց գանձել ծախսերի ամբողջական վերականգնմանն ուղղված վարձավճարներ*»:
- Բանկի՝ *կատարողականի նկատմամբ* պահանջների համապատասխան սույն Ծրագրի իրականացումը ապահովելու նպատակով, Բանկն առաջարկում է *ներառել Վարկային Համաձայնագրում, որպես ուժի մեջ մտնելուն նախորդող լրացուցիչ պայման, հետևյալի ստացումը (յուրաքանչյուր* դեպքում ՎՋԵԲ-ի համար ընդունելի ձևով և բովանդակությամբ). ապրուստի վերականգնման ծրագիր (որտեղ նշված են (i) այն անձինք, ովքեր տնտեսական տեղահանման համար փոխհատուցում ստանալու իրավունք ունեն և (ii) փոխհատուցման/վերականգնման համապատասխան տեսակը / մակարդակը, որը պետք է տրամադրվի այդ նույն անձանց), և լրացուցիչ բնապահպանական և սոցիալական ուսումնասիրություններ:
- Բաժին 5.02 (բ). որոշվեց թույլատրել ճկունություն այն Քաղաքապետարաններին, որոնք չունեն գլխավոր իրավաբան, և տալ հետևյալ պարզաբանումը *«(կամ, եթե չկա գլխավոր իրավաբան, Բանկի համար ընդունելի այլ լիազոր ներկայացուցչի)»*:
- Բաժին 5.02 (բ)(1). որոշվեց փոխարինել "ratified" («վավերացված») բառը "approved" («հաստատված») բառով:
- Բաժին 5.03. որոշվեց վերանայել օրերի քանակությունը. 120-ի փոխարեն՝ 180 օր:
- Բաժին 6.01. ֆինանսների նախարարության հասցեն պետք է նշվի հետևյալ կերպ. Հայաստանի Հանրապետություն, գ. Երևան 0010, Մելիք-Ադամյան փողոց 1
- Հավելված 1 (3)-ում նշված ամսաթիվը կթարմացվի, դառնալով 2017թ. նոյեմբերի 30-ը:

<u>Ծրագրի Իրականացման և Աջակցության Համաձայնագիր</u>

- Բաժին 1.02 - Ծրագրի Սուբյեկտի Լիազոր Ներկայացուցիչ տերմինը պետք է սահմանվի որպես Ծրագրին մասնակցող քաղաքային համայնքներից յուրաքանչյուրի Քաղաքապետ: Հետևաբար, պահպանվում է հետևյալ ձևակերպումը. «նշանակում է, Ծրագրի Քաղաքապետարանի առնչությամբ, նրա Քաղաքապետը»:
- Բաժին 3.01. կավելացվի հետևյալ ձևակերպումը. «տրամադրի բանկին»:
- Բաժին 4.01 (ժ). ՀՀ պատվիրակությունը խնդրեց բացատրել կատարողականի (կատարված աշխատանքի) վրա հիմնված փոխհատուցման հիմնավորումը հանրային ծառայությունների պայմանագրի համար:
- Բաժին 4.01 (ի). ՀՀ պատվիրակությունը խնդրեց հանել մրցույթի պահանջը: ՀՀ պատվիրակությունն ընդգծեց, որ մունիցիպալ ծառայությունները մատուցվում են մունիցիպալ ընկերությունների կողմից ավելի ցածր գնով և ավելի բարձր որակով, քան այն, որը կարող է առաջարկել մասնավոր օպերատորը: Բանկի պատվիրակությունը առաջարկեց վերանայել ձևակերպումն այնպես, որ Ծրագրի Քաղաքապետարանները այնուամենայնիվ անցկացնեն մրցույթ, սակայն, եթե նրանք պայմանագիր չկնքեն մասնավոր օպերատորների կողմից հետաքրքրության պակասի պատճառով, կամ եթե

մասնավոր օպերատորները առաջարկեն ավելի վատ պայմաններ, քան մունիցիպալ ընկերությունը, դա չի համարվի համաձայնագրի պայմանի խախտում: Հետևաբար, «մրցույթի միջոցով պատվիրել» ("award tender")-ի փոխարեն Բանկն առաջարկեց հետևյալ ձևակերպումը. «*հրավիրել մասնավոր օպերատորներին, բաց մրցույթի միջոցով, հայտեր ներկայացնել թափոնների հավաքման բոլոր ծառայությունների համար*»: ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը առաջարկեց հետևյալ ձևակերպումը. «*հրավիրել մասնավոր և մունիցիպալ օպերատորներին, բաց մրցույթի միջոցով, հայտեր ներկայացնել թափոնների հավաքման բոլոր ծառայությունների համար*»:

- Բաժին 4.01 (լ) առաջարկ արվեց փոխարինել առկա աղբավայրերը «փակել»- "closure" ձևակերպումը «*դադարեցնել շահագործումը*» ձևակերպումով: Ներքին քննարկումների արդյունքում Բանկը կարող է ընդունել հետևյալ ձևակերպումը. «*դադարեցնի շահագործումը և փակի, Բանկի համար ընդունելի եղանակով*»:
- Հավելված 1 և Հավելված 2. ՀՀ պատվիրակության խնդրանքով ընդգծվել է, որ Հավելված 1 և Հավելված 2-ը դեռևս ենթակա են փոփոխությունների իրականացման փուլի ընթացքում:

<u>Դրամաշնորհային համաձայնագիր</u>

- Իրավական համաձայնագրերում փոխարինել *Հայաստան* բառը *Հայաստանի Հանրապետություն* բառակապակցությամբ:
- Բաժին 1.01 Սահմանումներ.
  - Նախարարություն նշանակում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:
  - Ստացողի Լիազոր ներկայացուցիչ նշանակում է Հրազդանի Քաղաքապետ: Հայաստանյան պատվիրակությունը հետաքրքրվեց, թե ինչու Ծրագրի Քաղաքապետարաններից միայն Հրազդանի Քաղաքապետարանն է հանդիսանում Դրամաշնորհային Համաձայնագրի ստորագրողը: Առաջարկվեց փոփոխել ձևակերպումը և լիազորել Ծրագրի Քաղաքապետարաններին որոշումներ կայացնելու հարցում: Սակայն Բանկի պատվիրակությունը ընդարձակ պարզաբանում առաջարկեց գումարի մասհանումների գործընթացի վերաբերյալ և նշեց, որ միջոցները փոխանցվում են անմիջապես կապալառուներին, առանց Հրազդանի Քաղաքապետարանի բյուջեին հասնելու: ՀՀ պատվիրակությունը համաձայնեց, որ Դրամաշնորհային Համաձայնագիրը ստորագրվի Հրազդանի Քաղաքապետի կողմից:
- Բաժին 3.08. Բանկի պատվիրակությունը ընդգծեց դոնորների տեսանելիության կարևորությունը, որը բարձրակարգ առաջնահերթություն է ԵՄ-ի համար:
- Բաժին 4.02. որոշվեց հանել հետևյալ ձևակերպումը «*(և, ըստ անհրաժեշտության, պետք է ապահովի, որ Ծրագրի յուրաքանչյուր Քաղաքապետարան)*»:
- Բաժին 5.01 (ա) (4). Խնդրանք ներկայացվեց հանել այս դրույթը, քանի որ Ծրագրի Քաղաքապետարանները Դրամաշնորհային Համաձայնագրի կողմ չեն հանդիսանում: Բանկի պատվիրակությունը բացատրեց, որ նրանք այնուամենայնիվ շահառուներ են հանդիսանում, այնպես որ պարտավորությունների չկատարումը պետք է Բանկին հնարավորություն թողնի կասեցնել մասհանումները:
- Բաժին 5.05 (բ). ՀՀ պատվիրակությունը առաջարկեց հանել Բաժին 5.01 (ա) (4)-ին արվող հղումը, քանի որ Հրազդանի Քաղաքապետարանը չի կարող վերադարձնել Դրամաշնորհային ֆինանսավորումը ամբողջությամբ կամ մասամբ, եթե Ծրագրի Քաղաքապետարանները չկատարեն իրենց պարտավորությունները: Բանկի

պատվիրակությունը բացատրություն տվեց, որից հետո որոշվեց թողնել ներկայիս ձևակերպումը:

- ՀՀ ֆինանսների նախարարությունը առաջարկեց համաձայնագրում ավելացնել Ֆորս մաժորի վերաբերյալ մի կետ հետևյալ ձևակերպմամբ. *Պատերազմի, ֆորս մաժորի կամ այլ պետական արտակարգ իրավիճակների դեպքում, կամ այն դեպքերում, երբ առկա է սպառնալիք իր ազգային անվտանգությանը, Ստացողը կարող է միջոցներ ձեռնարկել ի շեղումն սույն Դրամաշնորհային Համաձայնագրի ներքո իր պարտավորությունների, այնքանով, որքանով դա պահանջվում է, ելնելով կոնկրետ իրավիճակի բարդությունից՝ այն պայմանով, որ նման միջոցառումները չեն հակասում միջազգային իրավունքի ներքո նրա մյուս պարտավորություններին:* Ներքին քննարկումներից հետո Բանկի պատվիրակությունը տեղեկացրեց, որ Բանկը չի կարող ընդունել *ֆորս մաժորի* վերաբերյալ առաջարկվող դրույթը: Ավելի կոնկրետ, Բանկի ստանդարտ պայմաններն ու դրույթները, որոնցով կառավարվում է վարկը, չեն նախատեսում *ֆորսմաժորային* դրույթ: Ըստ այդմ, քանի որ Բանկը պետք է նույն միջոցները կիրառի և վարկի, և դրամաշնորհի նկատմամբ, Բանկը դրամաշնորհային համաձայնագրում չի կարող ընդգրկել *ֆորսմաժորային* դրույթ:

Մի շարք այլ մանր փոփոխություններ, ճշգրտումներ և ուղղումներ համաձայնեցվեցին և ուղղակիորեն ներառվեցին կից ներկայացված Վարկային Համաձայնագրի և Ծրագրի Համաձայնագրի նախագծերում:

3. ԱՅԼ ՀԱՐՑԵՐ

Լրացուցիչ թեմաներ

- Գեղարքունիքի մարզի ներառումը կամ Ծրագրի Զաղաքապետարանների ցանկից Սևանի Զաղաքապետարանի բացառումը. Կողմերը պատրաստակամություն են հայտնել անմիջապես սկսելու Փուլ II-ի ներդրումների նախապատրաստումը, ինչը, սակայն, ենթակա է ֆինանսների նախարարության կողմից հաստատման: Գեղարքունիքի մարզի համար ստույգ գումարը կսահմանվի տեխնիկատնտեսական ուսումնասիրության ընթացքում:

Վարկային փաստաթղթերի վերանայված տարբերակը

Բանկը կտրամադրի Հայաստանյան պատվիրակությանը Վարկային Համաձայնագրի, Ծրագրի Իրականացման և Աջակցության Համաձայնագրի և Դրամաշնորհային Համաձայնագրի վերանայված տարբերակները, յուրաքանչյուր դեպքում մեկ մաքուր օրինակ և մեկ օրինակ, որի մեջ նշված է, թե ինչն է փոփոխվել համեմատած Վարկառուին տրամադրված վերջին տարբերակի հետ:

ՎԶԵԲ-ի՝ Տնօրենների Խորհրդի կողմից հաստատումը

Բանկի պատվիրակությունը հաստատեց, որ ակնկալվում է ծրագիրը ներկայացվել Բանկի տնօրենների խորհրդի հաստատմանը 2014թ. նոյեմբերի 12-ին: Բանկի պատվիրակությունն ու հայաստանյան պատվիրակությունը հաստատեցին, որ իրենք մտադիր են ստորագրել Վարկային Համաձայնագիրը, Ծրագրի Իրականացման և Աջակցության Համաձայնագիրը և Դրամաշնորհային Համաձայնագիրը 2014թ. նոյեմբերի առաջին կեսին (ամսաթիվը ենթակա է հաստատման): ՀՀ պատվիրակությունը կստանա անհրաժեշտ լիազորություն՝ ստորագրելու Վարկային Համաձայնագիրը, Դրամաշնորհային Համաձայնագիրը և Ծրագրի

Իրականացման և Աջակցության Համաձայնագիրը: Վարկային Համաձայնագիրը ենթակա է ՀՀ Ազգային Ժողովի կողմից վավերացման:

Իրավական փաստաթղթերի լեզուն
Բանկի ներկայացուցիչները բացատրեցին, որ կստորագրվի միայն Վարկային Համաձայնագրի, Դրամաշնորհային Համաձայնագրի և Ծրագրի Իրականացման և Աջակցության Համաձայնագրի անգլերեն լեզվով բնօրինակի վերջնական տարբերակը, Բանկի ընթացակարգի համաձայն:

Ստորագրման վայրը
Որոշվեց, որ, երբ Ծրագիրը հաստատվի Բանկի Տնօրենների Խորհրդի կողմից, Վարկային Համաձայնագրի ստորագրումը տեղի կունենա Հայաստանում, վայրը ենթակա է որոշման: Ստորագրման ակնկալվող ամսաթիվը նոյեմբերի առաջին կեսն է:

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԱՄԱՐ

_____
Անուն, ազգանուն.
Պաշտոն.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

_____
Արտաշես Բախշյան
ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ

Հայաստանյան պատվիրակություն

Արտաշես Բախշյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարի տեղակալ (Բանակցային խմբի ղեկավար)
Գրիշա Հովհաննիսյան	ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի տնօրեն
Վահագն Լալայան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ներդրումային քաղաքականության վարչության պետ
Վահագն Փիլիպոսյան	ՀՀ ԱԳ նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության միջազգային պայմանագրերի և դեպոզիտի բաժնի պետ
Հայսեր Գասպարյան	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի բյուջետային գործընթացի կառավարման վարչության արտաքին աղբյուրներից ստացվող նպատակային վարկային և դրամաշնորհային միջոցների ֆինանսական ծրագրավորման բաժնի պետ
Լարիսա Հարությունյան	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի միջազգային համագործակցության վարչության օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության բաժնի պետ
Սամվել Սրապյան	ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի բնակարանային քաղաքականության և կոմունալ ենթակառուցվածքների վարչության բնակարանային ֆոնդի կառավարման և կոմունալ ենթակառուցվածքների բաժնի պետ
Արշավիր Խաչատրյան	ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ
Ստելա Մկրտչյան	ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի պետական պարտքի կառավարման վարչության գործառնական բաժնի գլխավոր մասնագետ
Մարինե Հարությունյան	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի պետական պարտքի կառավարման վարչության հաշվառման և սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ

Արտաշես Ավագյան	ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության իրավական խորհրդատվության և զարգացման բաժնի գլխավոր մասնագետ
Թամարա Ղալայան	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի միջազգային համագործակցության վարչության օտարերկյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության բաժնի առաջատար մասնագետ
Շոթա Խաչատրյան	ՀՀ Կոտայքի մարզի Հրազդանի քաղաքային համայնքի բնակֆոնդի շահագործման և կոմունալ տնտեսության բաժնի պետ
Արարատ Դումանյան	ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճնի քաղաքային համայնքի աշխատակազմի քարտուղար
Մանուկ Հակոբյան	ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի քաղաքային համայնքի քաղաքապետի օգնական
Միշա Եղիազարյան	ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի քաղաքապետի տեղակալ
Հակոբ Շահգալդյան	ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի քաղաքային համայնքի ղեկավար
Կարեն Հարությունյան	ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի քաղաքապետի տեղակալ
Համլետ Սահակյան	ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի քաղաքապետի տեղակալ

<u>Բանկի պատվիրակությունը</u>

Լևան Շարվադզե
Առաջատար բանկիր, Համայնքային և բնապահպանական ենթակառուցվածքների թիմ

Յոհան Ֆրեդհոլմ
Առաջատար բանկիր, Համայնքային և բնապահպանական ենթակառուցվածքների թիմ

Անժելա Սաքս
Առաջատար բանկիր, ՎԶԵԲ-ի երևանյան գրասենյակ

Թեա Մելիքադզե
Բանկիր, Համայնքային և բնապահպանական ենթակառուցվածքների թիմ

Քսավյե Ռյոմոն
Ավագ իրավախորհրդատու, Գլխավոր իրավախորհրդատուի գրասենյակ